ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի ներկայացուցչի՝ 2025 թվականի ապրիլի 27-ից 30-ն ընկած ժամանակահատվածում Մեծ Բրիտանիա գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Մասնակցի անուն, ազգանուն և զբաղեցրած պաշտոն.

Աննա Պետրոսյան – Հանձնաժողովի մրցակցության վերահսկողության վարչության պետ.

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Մեծ Բրիտանիա, քաղաք Լոնդոն, 2025 թվականի ապրիլի 27-ից 30-ը ներառյալ.

3. Գործուղման հիմքը.

Միջազգային մասնավոր ձեռնարկությունների կենտրոնի (CIPE) կողմից կազմակերպված «Հայաստանում քայքայիչ կապիտալի սպառնալիքի՝ հասարակական և մասնավոր հատվածի միջև համակարգվածության ուժեղացում» թեմայով ծրագրին մասնակցություն.

4. Գործուղման նպատակը.

Ուսումնական այց Մեծ Բրիտանիայի մի շարք կառույցներ համապատասխան մասնագետների հետ փորձի փոխանակման նպատակով:

5. Գործուղման արդյունքները

Գործուղման ընթացքում հադիպումներ են եղել Մեծ Բրիտանիայի մի շարք կառույցների հետ, որի ընթացքում քննարկվել է ռիսկային ներդրումների գնահատումը:

<u>Այցի ընթացքում քննարկվել է հետևյալ թեմաները</u>

Իրականացվել է այցելություն Մեծ Բրիտանիայի Թագավորական Միացյալ Ծառայությունների Ինստիտուտ (RUSI), որի շրջանակներում քննարկվել է հետխորհրդային տարածքում վնասակար արտաքին ազդեցության վերաբերյալ հարցեր: Մասնավորապես քննարկվել է հետևյալ հարցերը.

- Որո՞նք են անօրինական ֆինանսների և պատժամիջոցներից խուսափելու հետ կապված հիմնական ռիսկերը,
- ինչպե՞ս է ռուսական տնտեսական ազդեցությունը փոխում քաղաքական դաշտը, և որոնք են դրա հետ կապված հիմնական ռիսկերը,

- ի՞նչ դասեր կարելի է քաղել այլ երկրներից՝ անօրինական ֆինանսավորման, պատժամիջոցների շրջանցման և արտաքին տնտեսական ճնշման դեմ պայքարում,
- ինչպե՞ս կարելի է խթանել բիզնեսներին՝ կիրառելու ավելի ուժեղ համապատասխանության մեխանիզմներ պատժամիջոցների և անօրինական ֆինանսավորման զարգացող ռիսկերին արձագանքելու համար,
- ի՞նչ տեսակի աջակցություն կարող է պահանջվել Մեծ Բրիտանիայից, ԱՄՆ-ից և ԵՄ-ից՝ պատժամիջոցների համապատասխանության կիրառման և անօրինական ֆինանսների դեմ պայքարի իր կարողությունները ուժեղացնելու համար:

Ներդրումների սկրինինգ ծրագրի ներդրման շրջանակներում հանդիպումներ են եղել Մեծ Բրիտանիայի մի շարք կառույցների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև քննարկվել է ռիսկային ներդրումների գնահատման համակարգը Մեծ Բրիտանիայում: Մասնավորապես կայացել են հանդիպումներ Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի համագործակցության և զարգացման գրասենյակի, Տնտեսական անվտանգության և դիմադրողականության վարչության, Մեծ Բրիտանիայում ԱՄՆ դեսպանության ներկայացուցիչների, Բիզնեսի և առևտրի դեպարտամենտի հետ, որոնց ընթացքում քննարկվել են, թե ինչպե՞ս են նրանք աշխատում ընկերությունների հետ տնտեսական անվտանգության հարցերում:

Այստեղ կարևորվում էր նաև Մեծ Բրիտանիայում արտաքին և ռիսկային ներդրումների գնահատման համակարգը՝ հաշվի առնելով համակենտրոնացումների հայտարարագրումն այս շրջանակներում:

Մրցակցության վերհսկողության
վարչության պետ՝ **Ա. Պետրոսյան**

08.05.2025թ.